երէկ Թիֆլիս ժամանելուն պէս՝ Յովհաննէս արքայորդին իւր ամենալաւ իշխանների հետ միասին դիմաւորեց նրան Կուկի կոչուած գիւղի մօտ։ Այնուհետև՝ մինչ նա անցնում էր՝ ռմբաձգութիւն եղաւ. իսկ նրա քաղաք մտնելու րոպէին ընդ առաջ ելաւ դռների մօտ հաւաքուած եկեղեցական դասը հանդիսաւոր զգեստաւորութեամբ. ուր Նորին սրբութիւնն ևս զգեստ հագաւ, ապա թէ հետի գնաց մինչև հայոց Վանքի եկեղեցին և այն տեղ թագաւոր Կայսրի արևշատութեան համար մաղթանք կատարեց, մի պատչաճ քարոզ ասելով ժողովրդին։ Հասցնելով այս ի գիտութիւն Ձերդ գերազանցութեան, կաւելացնեմ, որ ես էլ գեներալ-Մայոր Գուլեակովի և մի քանի սպաների հետ դիմաւորեցի նրան Կուկի գիւղի մօտերքում»։ — «իմ Թիֆլիս գալուց յետոյ», գրում էր Հայրապետը Պոստոպչին կոմսին, «տեղւոյս հանգամանքների հետ ծանօթանալով, բաւական յաջողեցայ յունկնդրութիւն և ի հնազանդութիւն իմ Կայսրին բերել թէ արքայորդիներին, որոնց հետ անձամբ տեսակցութիւն ունեցայ և թէ անուանի իշխաններին։ Թագաւորիս չնորհները վայելելով հոգեպէս մխիթարուած եմ, որ գէթ մասամբ նպաստաւոր եղայ Նորին Կայսերական Մեծութեան սրբազան կամքի իրագործման և օգտաւէտ վրաց թագաւորութեան՝ դրան ընդ միշտ Ռուսաց Պետութեան հետ միացնող Բարձրագոյն մանիֆէստի հրատարակման գործում։ Այս իսկ Բարձրագոյն կամքի իրագործման համար շատ աշխատանք կրեց իւր ծառայութեան պարտքին համեմատ նախ գեներալ-մայոր Լազարևը. Վրաստանը համայն Ռուսիայի հպատակութեան ներքոյ գնող Բարձրագոյն մանիֆէստը ամսոյս 16-ին վրաց եկեղեցու մէջ յայտարարելուց յետոյ՝ նոյնը մի առանձին հաղորդագրութեամբ ուղարկեց և ինձ հայոց եկեղեցում ծանուցանելու համար. որ և ես ամսոյս 17-ին ընդհանուր հաճութեամբ և պատչաճաւոր հանդիսով հրատարակեցի։ Այս առթիւ տեղի գտած հանդիսի կարգը պատիւ ունիմ ներկայացնել ընդ ամին»։

Մինչ այս մինչ այն՝ երեք եպիսկոպոսից բաղկացած մի պատգամաւորութիւն եկաւ Էջմիածնից՝ կաթողիկոսին Մայր Աթոռը տանելու համար։ Նորին Սրբութիւնն արդէն պատրաստւում էր ճանապարհ ընկնել և բարև մնայի այցելութիւններ էր անում։ Փետրուարի 27 նա կամեցաւ բաղանիք գնալ։ Դարիա թագուհին այդ իմանալով, առաջարկեց նրան Ալքայական կոչուած բաղանիքը, որ այն ժամանակ թագուհուն էր

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան